Արդար բնակարանային պայմաններ հոգեկան առողջության, մտավոր կամ զարգացման խանգարումներ ունեցող անձանց համար

Այցելե՛ք www.hud.gov/fairhousing
կամ զանգահարե՛ք խտրականության
հարցերով ազգային թեժ գիծ
1-800-669-9777 կամ 1-800-877-8339 (Դաշնային տեքստային
հեռախոսային ծառայություն) հեռախոսահամարներով

EQUAL HOUSING OPPORTUNITY

Armenian

Արդար բնակարանային պայմաններ հոգեկան առողջության, մտավոր կամ զարգացման խանգարումներ ունեցող անձանց համար

Արդար բնակարանների մասին օրենքներն արգելում են բնակարանային խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հոգեկան առողջություն, մտավոր կամ զարգացման խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ: Հաշմանդամության հիման վրա բնակարանային խտրականության օրինակներ են.

- Հաշմանդամության պատճառով հրաժարվել ձեզ վարձով բնակարան տալ
- Հրաժարվել տրամադրել ողջամիտ հարմարեցումներ կամ փոփոխություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ձեզ կամ այն անձին, ում հետ ապրում եք՝ բնակարանն օգտագործելու և վայելելու հավասար հնարավորություն ունենալու համար
- Հաշմանդամության պատճառով հրաժարվել տեղեկություններ տրամադրել կամ մատչելի բնակարաններ ցույց տալ ձեզ կամ այն անձին, ում հետ ապրում եք
- Այլ պայմաններ դնելով մատչելի բնակարան վարձելու համար, ինչպիսիք են՝ հաշմանդամության պատճառով գանձել ավելի բարձր վարձավճար կամ երաշխիքային կանխավճար
- Հաշմանդամության պատճառով որոշակի բնակելի միավորներում կամ բնակելի համալիրի հատվածներում ապրելու սահմանափակում
- Հաշմանդամության պատճառով ձեզ կամ ձեզ հետ ապրող անձի վտարումը
- Ձեր կամ ձեզ հետ ապրող անձի նկատմամբ ոտնձգության կիրառում հաշմանդամության պատճառով

Այցելե՛ք https://www.hud.gov/fairhousing ձեր բնակարանային արդար իրավունքների մասին ավելին իմանալու համար:

Բնակարանային խտրականության եք ենթարկվե՞լ: Այցելե՛ք https://www.hud.gov/fairhousing/fileacomplaint կամ զանգահարե՛ք HUD-ի թեժ գիծ 1-800-669-9777 (անգլերեն/իսպաներեն) կամ 1-800-877-8339 (Դաշնային տեքստային հեռախոսային ծառայություն) հեռախոսահամարներով բողոք ներկայացնելու համար:

Բնակարանային մատակարարի կողմից անօրինական է ձեր դեմ քայլեր ձեռնարկելը, քանի որ դուք բողոք եք ներկայացրել արդար բնակարանային պայմանների վերաբերյալ:

Armenian